ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
**ՎԱՅՈՑ ՁՈՐԻ**
**ՄԱՐԶՊԵՏ**

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**« 02 » ապրիլ 2021թ.** **N 43 Ա**

## ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՈՒՄ ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԱՅԻՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅԱՆ (COVID-19) ԴԵՄ ՊԱՏՎԱՍՏՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ, ԱՅԴ ԹՎՈՒՄ ՆԱԵՎ ՀԱՆՐԱՅԻՆ ԻՐԱԶԵԿՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԼԻԱՐԺԵՔ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՄԱՐԶՊԵՏԻՆ ԿԻՑ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի, 14-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 5-րդ կետերի պահանջներով և հիմք ընդունելով ՀՀ առողջապահության նախարարի 2021թ. մարտի 25-ի թիվ ԱԱ/04/5896-2021 գրությունը՝*

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ**

*1. Կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) համավարակի կանխարգելման համար պատվաստումների գործընթացը, այդ թվում նաև հանրային իրազեկման աշխատանքները լիարժեք կազմակերպելու և իրականացնելու նպատակով ՀՀ Վայոց ձորի մարզպետին կից ստեղծել հանձնաժողով՝ համաձայն հավելվածի:*

*2. Սահմանել, որ հանձնաժողովի կողմից համակարգվում են հետևյալ աշխատանքները՝*

*1) COVID-19-ի դեմ պատվաստումների ներդրման միջոցառումներ, միկրոպլանավորում և հաշվետվությունների պարբերաբար ներկայացում մարզպետին և Առողջապահության նախարարություն,*

*2) COVID-19-ի դեմ պատվաստումների գործընթացի մշտադիտարկում, ամենօրյա քննարկումներ, առկա խնդիրների բացահայտում և դրանց լուծմանն ուղղված միջոցառումների իրականացում,*

*3) հետպատվաստումային անբարեհաջող դեպքերի մշտադիտարկում և արագ արձագանքում,*

4) բուժաշխատողների համար խորհրդակցությունների կազմակերպում և իրականացում,

5) հանրային իրազեկման աշխատանքների կազմակերպում և իրականացում մարզում՝ մարզպետարանի պաշտոնական կայքերի միջոցով:

3. Հանձնաժողովի գործունեության անմիջական վերահսկողությունը վերապահել ՀՀ Վայոց ձորի մարզպետին:

4. Որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

4/2/2021

X

ԱՐԱՐԱՏ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Подписано: GRIGORYAN ARARAT 1310850550 Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ

*Հավելված՝ ՀՀ Վայոց ձորի մարզպետի*
*2021թ. ապրիլի 2-ի թիվ 43-Ա որոշման*

**ՀՀ Վայոց ձորի մարզում կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) դեմ պատվաստումների գործընթացը, այդ թվում նաև հանրային իրազեկման աշխատանքները լիարժեք կազմակերպելու և իրականացնելու նպատակով մարզպետին կից համաձայնեցնող անհատական կազմը**

1. **Ասատրյան Նանե** - մարզպետի տեղակալ (առողջապահության հարցերը համակարգող)
2. **Ասլանյան Վասիլ** - մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ,
3. **Կարապետյան Լիլիա** - մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետի տեղակալ,
4. **Պողոսյան Մարինե** - Վայքի ԲՄ ՓԲԸ մանկաբույժ, իմուն պատասխանատու,
5. **Շահրամանյան Աստղիկ** - Եղեգնաձորի ԲԿ ՓԲԸ տեղամասային թերապևտ,
6. **Բարսեղյան Օֆելյա** - «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի մարզային մասնաճյուղի տնօրեն,
7. **Ծերունյան Բյուրեղ** - «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի մարզային մասնաճյուղի էպիդեմիոլոգ: